ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թվականի սեպտեմբերի 15-ից 17-ը ք. Ջուլֆա (Իրանի Իսլամական Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Սուրեն Կարայան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Գործուղման վայրը՝ Ջուլֆա (Իրանի Իսլամական Հանրապետություն)

Գործուղման ժամկետները՝ 15.09.2017-17.09.2017

4. **Հրավիրող կողմը**

ԻԻՀ «Արաս» ազատ տնտեսական գոտու ղեկավարությունը

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

«Մեղրի» ազատ տնտեսական գոտուն առնչվող համագործակցության հեռանկարների քննարկում ԻԻՀ «Արաս» ազատ տնտեսական գոտու ղեկավարության հետ

6. **Քննարկված թեմաները**

Այցի ընթացքում Սուրեն Կարայանի գլխավորած պատվիրակությունը ծանոթացել է «Արաս» իրանական ազատ տնտեսական գոտու միավորներին, այցելել է ԱՏԳ-ի գյուղատնտեսական, արտադրական, արդյունաբերական, առևտրային և զբոսաշրջային տարածքներ:

Պատվիրակության կազմում էին նաև մի շարք գործարարներ Հայաստանից, որոնք տեղում գործարար կապեր են հաստատել իրանցի գործընկերների հետ, ճշգրտել հետագա համագործակցության հեռանկարները:

Նախարարը կարևորել է արդյունաբերության ոլորտում համատեղ արտադրությունների հիմնումը, ինչը հնարավորություն կտա լավագույնս օգտագործելու երկու երկրների ներուժը: Կողմերը փաստել են, որ «Մեղրի» և «Արաս» գոտիների համագործակցությունը կարող է լինել հայ-իրանական տնտեսական փոխգործակցության խորացման լավագույն կամուրջ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կայացել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Ս. Կարայանի գլխավորած պատվիրակության հանդիպումները ԻԻՀ «Արաս» ազատ տնտեսական գոտու գործադիր տնօրեն Մոհսեն Արաբ Բաղիի հետ:

Նախարարի կողմից առաջարկվել է քննարկել հայկական «Ice House» լոգիստիկ ընկերության հնարավորությունների օգտագործումը՝ իրանական գյուղմթերքների դեպի ռուսական շուկա արտահանման հարցում:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաձայն ս/թ օգոստոսի 15-ից 18-ը ԻԻՀ Նախագահի խորհրդական և ԻԻՀ ազատ առևտրի գոտիների գերագույն խորհրդի քարտուղար Աքբար Թորքանի գլխավորած պատվիրակության այցի շրջանակներում ստորագրված հուշագրի դրույթների, պայմանավորվածություն է ձեռք բերվել սահմանել Հայաստանի և Իրանի միջև ազատ տնտեսական գոտիների ոլորտում համագործակցության հիմնական ուղղությունները, մասնավորապես ապահովել «Մեղրի» ազատ տնտեսական գոտու և «Արաս» տնտեսական հատուկ գոտու առաջմղումն և սերտ փոխգործակցությունը վերջիններիս զարգացման նպատակով:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել «Մեղրի-Արաս» խորագրով գործարար համաժողով, որը կհամախմբի Հայաստանի և Իրանի բոլոր շահագրգիռ գործարարներին, որոնք ցանկանում են երկու ազատ տնտեսական գոտիներում գործունեություն ծավալել և համագործակցել:

Նախարարի առաջարկության համաձայն, ձեռք է բերվել պայմանավորվածություն, ըստ որի, առաջիկայում զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների խումբ կմեկնի Իրան՝ ԱՏԳ՝ իրանցի գործընկերների հետ քննակելու տարածաշրջանային զբոսաշրջության զարգացման հնավորությունները:

10.Գործուղվողը

Սուրեն Կարայան

11. Ստորագրությունը, ամսաթիվը